WELFARE-TO-WORK ԾՐԱԳՐԻ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Եթե այս ծանուցագիրը կարդալու կամ հասկանալու համար օգնության կարիք ունեք, այդ մասին հայտնեք վարչական շրջանին:

ԻՆՉ Է ՁԵԶ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ WELFARE-TO-WORK ԾՐԱԳԻՐԸ

- Welfare-to-Work ծրագիրը կարող է Ձեզ սովորեցնել, վերապատրաստել և խորհուրդ տալ՝ օգնելով աշխատանք գտնել:
- Ահա որոշ բաներ, որ Welfare-to-Work ծրագիրը կարող է անել Ձեզ համար՝՝
  - օգնել աշխատանք փնտրելու հարցում.
  - օգնել կրթական կամ մասնագիտական և աշխատավայրում անցկացվող վերապատրաստման դասընթացի հարցում և սովորեցնել տարրական ընթերցանություն, մաթեմատիկա ու անգլերեն.
  - օգնել ձեռք բերել աշխատանքային փորձ.
  - անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն տրամադրել Ձեզ կամ Ձեր ընտանիքին:
- Welfare-to-Work ծրագիրն ունի 24-ամսյա ժամանակաչափ (48-ամսյա ժամանակային սահմաններում):
- Դուք ունեք գործունեության բազմաթիվ տարբերակներ, որոնց կարող եք մասնակցել Welfare-to-Work ծրագրի 24-ամսյա ժամանակաչափի ժամանակաշրջանի ընթացքում:
- Welfare-to-Work ծրագրի 24-ամսյա ժամանակաչափի ժամանակաշրջանի վերջում Դուք գործունեության ավելի քիչ տարբերակներ կունենաք մասնակցության համար, որպեսզի շարունակեք ստանալ նույն գումարի կանխիկ դրամական օգնություն:
- Welfare-to-Work ծրագիրը Ձեզ կօգնի ձեռք բերել անհրաժեշտ աջակցության ծառայություններ, որոնք հարկավոր են Ձեր միջոցառումներին մասնակցելու համար, և վճարել այդ ծառայությունների համար: Վճարները ներառում են երեխայի խնամքի, տրանսպորտի և այլ ծախսեր, ինչպիսիք են հատուկ գործիքները կամ հագուստը, որոնք Ձեզ հարկավոր են գործ գտնելու համար: Դուք կարող եք կանխավճարներ ստանալ, եթե պահանջեք, որպեսզի ստիպված չլինեք Ձեր կանխիկ դրամական օգնությունն օգտագործել անհրաժեշտ աջակցության ծառայությունների համար վճարելու նպատակով:
- Welfare-to-Work ծրագիրը Ձեզ կտեղեկացնի երեխայի խնամքի հասանելի տեսակների մասին և կասի, թե որտեղ գտնել երեխայի խնամքի ծառայություն:

ԵՐԲ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՔ WELFARE-TO-WORK ԾՐԱԳՐՈՒՄ

- Դուք պետք է ընդգրկված լինեք Welfare-to-Work ծրագրում, եթե կանխիկ դրամական օգնություն եք ստանում Կալիֆորնիա նահանգի «Անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների նյութական օգնության և աշխատանքի տեղավորման ծրագրի» (California Work Opportunity and Responsibility to Kids, CalWORKs) շրջանակներում և ազատված չեք մասնակցությունից:
- Ձեզնից չի պահանջվում լինել Welfare-to-Work ծրագրում, եթե ազատված եք դրանից: Դուք ազատված եք, եթե՝
  - 16 տարեկանից ցածր կամ 60 կամ ավելի բարձր տարիքի եք.
  - 16, 17 կամ 18 տարեկան եք և հաճախում եք ցերեկային ուսուցման ավագ դպրոց կամ մեծահասակների դպրոց, եթե դպրոց հաճախելը չի կատարվում Ձեր Welfare-to-Work պլանի շրջանակներում.
  - ծնող չհանդիսացող խնամող ազգականն եք մի երեխայի, ով խնամարկյալ է կամ դատարանի որոշմամբ գտնվում է խնամակալության տակ, կամ մի երեխայի, ով ենթակա է հովանավորյալ խնամքի հանձնվելու վտանգի.
  - ֆիզիկապես կամ հոգեպես անկարող եք աշխատել կամ առնվազն 30 օրացուցային օր կանոնավորապես մասնակցել Welfare-to-Work ծրագրի որևէ միջոցառման.
  - մեկ երեխայի ծնող եք կամ նրա խնամատարն եք ծննդյան օրվանից մինչև 23 ամիս ներառյալ: **Այս բացառությունը հնարավոր է միայն մեկ անգամ**.
  - 6 ամսական կամ ավելի փոքր երեխայի ծնող եք կամ խնամող ազգական (վարչական շրջանից կախված՝ տարիքը կարող է հասնել մինչև 12 ամսականի): **Այս բացառությունը հնարավոր է միայն մեկ անգամ.**

ԵՐԲ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՔ WELFARE-TO-WORK ԾՐԱԳՐՈՒՄ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

  - 12 շաբաթական կամ ավելի փոքր երեխայի ծնող եք կամ խնամող ազգական (վարչական շրջանից կախված՝ տարիքը կարող է հասնել մինչև 6 ամսականի): Հարցրեք Ձեր սոցիալական աշխատողին, թե ինչքան փոքր պիտի լինի Ձեր երեխան, որպեսզի ազատվեք ծրագրին մասնակցելու պարտականությունից.
  - հղի եք, կամ բժիշկն ասում է, որ Դուք չեք կարող աշխատել կամ մասնակցել Welfare-to-Work ծրագրի միջոցառումներին, կամ վարչական շրջանը որոշում է, որ մասնակցությունը ոչ անպայմանորեն կհանգեցնի զբաղվածության, կամ որ վերապատրաստման դասընթացը նպատակահարմար չէ.
  - մնում եք տանը, որպեսզի խնամեք ընտանիքի որևէ անդամի, ով չի կարող հոգ տանել ինքն իր մասին (անձը հիվանդ է, հաշմանդամ է և այլն), և դա թույլ չի տալիս, որ աշխատեք կամ մասնակցեք Welfare-to-Work ծրագրի միջոցառումներին:
- Եթե Դուք հղի եք կամ ծնողական պարտականություններ եք կատարում Կալիֆորնիա նահանգի Անչափահաս ծնողների կրթական ծրագրում (Cal-Learn) ընդգրկված դեռահասի նկատմամբ, կամ եթե ավագ դպրոցի դիպլոմ կամ համարժեք վկայական եք ստացել Cal-Learn ծրագրում լինելու ընթացքում, ապա հնարավոր է, որ վերը նշված որոշ բացառություններ չգործեն Ձեզ համար: Դիմեք Ձեր իրավունակության հարցերով զբաղվող սոցիալական աշխատողին կամ Cal-Learn գործի կառավարչին:
- Եթե երկու ծնողները օգնություն են ստանում, և ծնողներից մեկը լրացրել է բոլոր պարտադիր ժամերը, ապա երկրորդն ազատվում է մասնակցությունից:
- Եթե կարծում եք, որ պետք է ազատված լինեք մասնակցությունից, Ձեր սոցիալական աշխատողին խնդրեք տալ ձևաթուղթ (CW 2186A), որպեսզի ներկայացնեք Welfare-to-Work ծրագրից ազատվելու խնդրագիրը: Վարչական շրջանը Ձեզ կասի՝ արդյոք կարող եք ազատվել Welfare-to-Work ծրագրից, թե մասնակցությունը պարտադիր է: Եթե նույնիսկ չպահանջվի լինել Welfare-to-Work ծրագրում, կարող եք խնդրել մասնակցել, և Ձեզ կասվի՝ արդյոք կարող եք:
- Եթե Դուք ազատված չեք Welfare-to-Work ծրագրից, ապա կարող է պահանջվել, որ գնաք Welfare-to-Work: Եթե պահանջվի գնալ, կստանաք ծանուցագիր, որտեղ կասվի, թե երբ է լինելու Ձեր առաջին տեսակցությունը:

ԵԹԵ ՁԵՔ ՈՒԶՈՒՄ ԱՆԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է WELFARE-TO-WORK ԾՐԱԳԻՐԸ.

- Եթե Ձեզնից պահանջվում է լինել Welfare-to-Work ծրագրում՝՝
  - Դուք հնարավորություն կունենաք ասելու՝ ինչու չեք արել այն, ինչ պահանջվում էր անել.
  - եթե հիմնավոր պատճառ չունենաք և չանեք այն, ինչ պահանջում է Welfare-to-Work ծրագիրը, որպեսզի շտկեք իրավիճակը, Ձեր կանխիկ դրամական օգնությունը կնվազեցվի:
- Եթե Ձեզնից չի պահանջվում լինել Welfare-to-Work ծրագրում, բայց կամավորագրվում եք Welfare-to-Work ծրագրի միջոցառումներին՝
  - Դուք հնարավորություն կունենաք ասելու՝ ինչու չեք արել այն, ինչ պահանջվել էր.
  - եթե կամավորագրվում եք Welfare-to-Work ծրագրի միջոցառումներին, բայց չեք մասնակցում՝ չունենալով բավարար հիմք, և չեք կամենում անել այն, ինչ պահանջում է Welfare-to-Work ծրագիրը, որպեսզի շտկեք իրավիճակը, Ձեր կանխիկ դրամական օգնությունը չի նվազեցվի, բայց հնարավոր է, որ Ձեզ չթույլատրվի կամավորի կարգավիճակով անմիջապես վերադառնալ Welfare-to-Work ծրագիր:

Երբ Դուք աշխատանք եք ստանում և օգնության ծրագրից դուրս եք գալիս, հնարավոր է, որ վարչական շրջանը կարողանա աշխատանքը սկսելուց հետո առավելագույնը առաջին 12 ամսվա ընթացքում վճարել անհրաժեշտ աջակցության ծառայությունների համար, եթե այդ ծառայությունները հարկավոր են, որպեսզի պահպանեք Ձեր աշխատանքը, իսկ Դուք ի վիճակի չեք անհրաժեշտ աջակցության ծառայությունների ծախսերը վճարել որևէ այլ աղբյուրից: Օգնությունից դուրս գալուց հնարավոր է նաև, որ կարողանաք մինչև երկու տարվա ընթացքում ստանալ երեխայի խնամքի ծառայություններ: Նաև հնարավոր է, որ կարողանաք 12 ամիս ստանալ անցումային Medi-Cal նպաստներ:

Դուք իրավունք ունեք ցանկացած ժամանակ պահանջելու այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են երեխայի խնամքը, տրանսպորտը կամ Welfare-to-Work ծրագրի կողմից մատուցվող այլ ծառայություններ: Կարող եք Ձեր սոցիալական աշխատողին խնդրել հեռախոսով կամ առերես, կամ կարող եք խնդրել գրավոր կերպով:

Դուք իրավունք ունեք պահանջելու նահանգային լսումներ, եթե համաձայն չլինեք վարչական շրջանի՝ Welfare-to-Work ծրագրին մասնակցելու վերաբերյալ կայացրած որոշումներից որևէ մեկին: